CONTOURGLOBAL

Հիդրո կասկադ

Հայտարարություն մրցույթի մասին
Մրցույթի համարը 132/17
Պատվիրատուն՝ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ն, որը գտնվում է քաղաք Գորիս, Գր. Տաթեւացու 2 հասցեում, հայտարարում է Մրցույթ:
Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասերի վրա եզրային արգելապատերի կառուցման աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր): Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45 **օրվա ընթացքում:** Յանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի մրցույթին մասնակցելու հավասար իրավունք, բացառությամբ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի մատակարարների/կապալառուների և երրորդ կողմի աշխատանքներ (ծառայություններ մատուցողի) կատարողի ներգրավման քաղաքականության պահանջների: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ **Տնտեսական հնարավորություններ, Տեխնիկական փորձ, Սարքավորումներ, Անձնակազմ, Որակավորում, Նույնանման պայմանագրերի իրականացման փորձ:** Ընտրված մասնակիցը որոշվում է սահմանված պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր: Պայմանագրի համար վճարումը կիրականացվի Կատարողին առաջարկվող պայմանագրի նախագծում սահմանված կարգով: Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն մրցույթի հայտերի (տեխնիկական և տնտեսական առաջարկ) բացման նիստը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը: Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը: Մրցույթի առաջարկները (տեխնիկական, տնտեսական) անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Գորիս Գր. Տաթեւացու 2 հասցեով, փաստաթղթային ձեւով **մինչեւ 2017թ. օգոստոսի 18-ը, ժամը 10:00,** եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց եւ հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է հրավեր գնային առաջարկները ներկայացնելու համար: Հայտերի (տեխնիկական, տնտեսական առաջարկների) բացումը տեղի

CONTOURGLOBAL
Հիդրո կասկադ

կունենա քաղաք Գորիս Գր. Տաթեւացու 2 հասցեում, **2017թ. օգոստոսի 18-ին ժամը 10:30-ին:** Մասնակիցների **Տնտեսական հնարավորությունների, Տեխնիկական փորձի, Սարքավորումների, Անձնակազմի, Որակավորման, Նույնանման պայմանագրերի իրականացման փորձի** վերաբերյալ պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները հայտով (տեխնիկական, տնտեսական առաջարկ) պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:
Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների գծով մասնագետ Է.Մուղումյանին:

**Հեռախոս՝ 0284 50014**

**Էլ. փոստ erik.mughumyan@contourglobal.com**

**Պատվիրատու՝ «Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ**

*<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ*

# Հ Ր Ա Վ Ե Ր

<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի կարիքների համար Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասերի վրա եզրային արգելապատերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի, (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասերի վրա եզրային արգելապատերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 132/17 եզակի հղման համարով անցկացվող մրցույթի ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի գնումների բաժնի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ erik.mughumyan@contourglobal.com

ՄԱՍ I

## 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի կարիքների համար՝ **Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասերի վրա եզրային արգելապատերի կառուցման աշխատանքների** ձեռքբերումը:

| *համարը* | *Աշխատանքների անվանումը* |
|---|---|
| 1 | Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասերի վրա եզրային արգելապատերի կառուցման աշխատանքներ |

Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասերի վրա եզրային արգելապատերի կառուցման աշխատանքների ձեռքբերման տեխնիկական բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի ՄԱՍ 2:

Սույն հրավերով նախատեսված աշխատանքների համար պահանջվում է հետևյալ լիցենզիան.

| Չափաբաժինների համարները | Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները). |
|---|---|
| 1 | 2 |
| | <u>*Շինարարական աշխատանքների իրականացման լիցենզիա՝ բնակելի,հասարակական և արտադրական և հիդրոտեխնիկական ներդիրով*</u> |

## 2. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

2.1 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) Տնտեսական հնարավորություններ,

2) Տեխնիկական փորձ

3)Անձնակազմ/աշխատանքային ռեսուրսներ/

4/Որակավորում

5/Նույնանման պայմանագրերի իրականացման փորձ.

6/Աշխատանքի պաշտպանության, տեխանվտանգության և բնապահպանության քաղաքականության հետ կապված հրավերին կցված կապալառուի գնահատման ստուգաթերթը

## 3.ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի տեխնիկական առաջարկ/այսուհետ հայտ/:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

3.2 Ընթացակարգի հայտ անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան մինչև 2017թ օգոստոսի 18-ը, ժամը՝ <<10:00>>-ն, ք. Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գնումների գծով մասնագետ Է. Մուղումյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

3.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

Տեխնիկական առաջարկ

Տեխնիկական փորձը

Անհրաժեշտ սարքավորումները

Անձնակազմ/աշխատանքային ռեսուրսներ

Որակավորումը

Կապալառուի գնահատման ստուգաթերթեր

Նույնանման պայմանագրերի իրականացման փորձը(նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների պայմանագրերի պատճեններ)

## 4. ՀԱՅՏԵՐԻ/ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ 2017թ օգոստոսի 18-ին ժամը <<10:30>>-ին, ք. Գորիս Գր. Տաթևացու 2 հասցեում:

4.2. Առաջարկի ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո հանձնաժողովը հավաքվում և բացում է բոլոր ներկայացված առաջարկները: Առաջարկները ներկայացրած ընկերությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի կողմից առաջարկները բացելու պահին: Հանձնաժողովը ուսումնասիրում և գնահատում է ներկայացված տեխնիկական առաջարկները, որից հետո հաստատում կամ մերժում է դրանց համապատասխանությունը տեխնիկական պահանջներին, ներառյալ առաքման ժամը և երաշխիքային պայմանները: Այն պարագայում, եթե ներկայացված փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ որոշել առաջարկի համապատասխանությունը, գնումների բաժինը թեկնածուին խնդրում է ներկայացնել հավելյալ մանրամասներ և ապացույցներ:

Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց և հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ծանուցում է տնտեսական առաջարկների բանակցման գործընթացում ներկայացնելու գնային առաջարկներ՝ Էլեկտրոնային եղանակով: Համակարգը կառավարող կամ գործընթացի դիտորդ հանդիսացող անձը կարող է տեսնել առաջարկված գները միայն առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո: Առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո դրանք դասակարգվում են ըստ գնի: Գնային առաջարկների բանակցությունների երկրորդ փուլը կարող է մեկնարկել բոլոր մասնակիցներին պատշաճ կերպով տեղեկացնելուց և նրանցից երկրորդ փուլում մասնակցելու վերաբերյալ գրավոր հաստատում ստանալուց հետո: Այս փուլում Առաջին փուլի (Սկզբնական առաջարկ) ամենացածր առաջարկված գինը

հայտարարվում է բոլոր մասնակիցներին՝ առանց տրամադրելու որևէ տեղեկություն այդ գինն առաջարկած մասնակցի մասին: Մասնակիցները կարող են առաջարկել ներկայացված գնից ավելի ցածր գին նախօրոք սահմանված ժամկետներում: Առավել ցածր ողջամիտ գին առաջարկած մասնակիցը հանձնաժողովի որոշմամբ ճանաչվում է ընտրված մասնակից/ հաղթող: Երկրորդ փուլում առաջարկների ներկայացման ժամկետը լրանալուն պես մշակվում է հաշվետվություն, որտեղ ներկայացված են մրցույթի արդյունքները և Կապալառուի ընտության առաջարկը: Հաշվետվությունը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների և հաստատվում Էլեկտրակայանի տնօրենի կողմից: Էլեկտրակայանի տնօրենի կողմից հաշվետվությունը հաստատելուց հետո 5 օրվա ընթացքում մրցույթի բոլոր մասնակիցները պաշտոնապես տեղեկացվում են առաջարկների դասակարգման և Մատակարարի ընտրության մասին: Պայմանագիրը ուղարկվում է ընտրված Մատակարարին ստորագրման համար:
Մրցույթին վերաբերող ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը արխիվացվում են և կցվում են Գնման պատվերին/Պայմանագրին:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

**5.1 Ընտրված մանակցի հետ կնքվում է Պայմանագիր** <Քոնթուրգլոբալ հիդրոկասկադ> ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի համապատասխան,ընտրված մասնակցին մրցույթի արձանագրության ծանուցումից 20 (քսան) օրացույցային օրվա ընթացքում:

## 6. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը/տեխնիկական առաջարկը/ ներկայացվում է փաստաթղթային ձևով և Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ,

որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից/ ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճեն>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

6.2 Սույն հրահանգի 6.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) Մրցութային ընթացակարգի ծածկագիրը.

գ) <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը

6.3 Սույն հրահանգի 6.1 և 6.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

| | |
|---|---|
| Սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) կնքվել է ք. Երևանում, 201- թ. ---------ին հետևյալ կողմերի միջև՝ | This Contract (hereinafter **"Contract"**) is executed in Yerevan on 201-, ----------------between: |
| **«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ**, գրանցված Երևան քաղաքում, Մելիք Ադամյան 2/2 հասցեում, ՀՎՀՀ՝ 02619957, ի դեմս ընկերության տնօրեն Արա Հովսեփյանի (այսուհետ՝ **Պատվիրատու**) և | **"CONTOURGLOBAL HYDRO CASCADE" CJSC**, having its seat and registered office at Yerevan city, 2/2 Melik Adamyan St., registered under TIN: 02619957, represented by Ara Hovsepyan in his capacity of Director, hereinafter referred to as **Contractor**,and |
| --------- գրանցված ----------, ի դեմս ---------- (այսուհետ՝**Կապալառու**) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին. | -----------having its seat and registered office at----------, hereinafter referred to as **Performer**, this contract was signed for the following: |
| 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ | 1. DEFINITIONS |
| **Աշխատանք՝** ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 2.1 կետում. | **Work** – as defined in Clause 2.1 of this Contract; |
| **Հանձնման-Ընդունման Վերջնական Ակտ՝** ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 8-րդ կետում. | **Final Acceptance Protocol** – as defined in Clause 8 of this Contract; |
| **Հանձնման-Ընդունման Միջանկյալ Ակտ՝** ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 8-րդ կետում | **Interim Acceptance Protocol** – as defined in Clause 8 of this Contract; |
| **Տեխնիկական բնութագիր՝** Աշխատանքի կատարմանը Պատվիրատուի կողմից ներկայացվող և պարտադրվող տեխնիկական պահանջներ և պայմաններ, որոնք սահմանված են Հավելված 2-ում. | **Technical Specification** – technical requirements and conditions submitted and mandated by the Contractor for performance of the Work defined in Annex 2; |

| | |
|---|---|
| **Չբացահայտված Տեղեկատվություն (առևտրային գաղտնիք)՝** անկախ ձևից Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեխնիկական, ֆինանսական, կազմակերպչական, առևտրային և Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող այլ տեղեկատվություն, որը անհայտ է երրորդ անձանց և Պատվիրատուն միջոցներ է ձեռնարկում այդ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար: | **Confidential Information** (trade secret) - regardless of the form any technical, financial, organizational, commercial and any other information concerning the Contractor and its activity which is unknown to third persons and by virtue of its being unknown has an actual or potential commercial value and the Contractor takes measures for the defense of its confidentiality. |
| 1. **Պայմանագրի առարկան** | **1. Subject of the Contract** |
| 1.1 Սույն պայմանագրի շրջանակներում (այսուհետ՝ Պայմանագիր) Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կապալառուն համաձայնում է կատարել ------------ աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանք) սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ում ներկայացված Տեխնիկական բնութագրի և նախահաշվի հիման վրա, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքը և վճարել համաձայն Պայմանագրի: | 1.1 Under the provisions of the present contract (the Contract) the Contractor assigns and the Performer accepts to perform ----------------------- (the Work) based on terms of Technical Specification and Bill of Quantity appended to this Contract as Annex 2, which is an integral part hereof, and the Contractor shall accept the Work and pay for the Work as per this Contract. |
| **2. Կապալառուի երաշխավորությունները** | **2. Performer's representations and warranties** |
| 2.1 Կապալառուն երաշխավորում է, որ սույն Պայմանագրի կատարման ընթացքում օգտագործվող Կապալառուի նյութերի որակը համապատասխանում է նման նյութերին ՀՀ օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով և ստանդարտներով, ներկայացվող պահանջներին, նորմերին | 2.1 The Performer represents and warrants that the quality of Performer's materials used during performance of this Contract comply with the requirements, norms, standards, conditions and specifications established for |

| | |
|---|---|
| ստանդարտներին, պայմաններին և բնութագրերին: Կապալառուն երաշխավորում է, որ Կապալառուի նյութերը ունեն համապատասխան սերտիֆիկատներ, տեխնիկական անձնագրեր, որոնք հավաստում են դրանց ծագումը, որակն ու պիտանիությունը: | such materials by legislation of Armenia, international Contracts and standards. The Performer warrants that Performer's materials have corresponding certificates, technical passports, which certify the origin, quality and suitability of such materials. |
| 2.2 Կապալառուն երաշխավորում է, որ ունի սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքը իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները և լիցենզիաները, որոնք պահանջվում են ՀՀ օրենսդրությամբ: | 2.2 The Performer warrants that it has all permissions and licenses required by legislation of Armenia necessary for performance of the Work, defined in this Contract. |
| 2.3 Կապալառուն երաշխավորում և պարտավորվում է Աշխատանքը կատարել ժամանակին, պատշաճ ձևով, բարձր որակով և պրոֆեսիոնալ մակարդակով՝ համաձայն սույն Պայմանագրի, ՀՀ օրենսդրության, Պատվիրատուի ցուցումների, պահանջների և արժեքների: | 2.3 The Performer warrants and undertakes to perform the Work in time, properly, with high quality and professional level, in accordance with this Contract, legislation of Armenia and the instructions and requirements of the Contractor. |
| 2.4 Կապալառուն հայտարարում և երաշխավորում է, որ ունի համապատասխան քանակի ռեսուրսներ և հնարավորինս լավագույն ունակություններով օժտված որակավորված անձնակազմ Աշխատանքը սահմանված ժամկետներում կատարելու համար: | 2.4 The Performer represents and warrants that it has enough resources and qualified staff with the best possible professional level to perform the Work within defined terms. |
| **3. Նյութեր և սարքավորումներ** | **3. Materials and equipment** |
| 3.1 Կապալառուն Աշխատանքը իրականացնում է իր ուժերով, նյութերով, միջոցներով, գործիքներով և սարքավորումներով, որոնք ներառված են գնում և պատասխանատվություն է կրում | |

դրանց որակի, ինչպես նաև տեսակի ճիշտ ընտրության համար:

3.2 Կապալառուի կողմից տրամադրվող բոլոր նյութերը պետք է լինեն նոր: Օգտագործված, ինքնաշեն նյութերի և վերամշակված պարագաների օգտագործումն արգելված է:

**4. Ռիսկի բաշխում, թույլտվություններ և համաձայնություններ**

**4.1** Աշխատանքի պատահական կորստի կամ վնասի ռիսկը մինչև Աշխատանքի Պատվիրատուին սույն Պայմանագրով սահմանված կարգով հանձնելը և Պատվիրատուի կողմից ընդունելը կրում է Կապալառուն: Աշխատանքը համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված Աշխատանքի Հանձնման-Ընդունման Վերջնական Ակտը ստորագրելու պահից:

4.2 Կապալառուն պարտավոր է ձեռք բերել Աշխատանքը կատարելու համար կամ դրա կատարման հետ կապված բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և համաձայնությունները իրավասու պետական մարմիններից:

4.3 Կապալառուն պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրի 4.2. կետով սահմանված իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Պատվիրատուի համար առաջացող բոլոր հնարավոր բացասական հետևանքների՝ ներառյալ պատճառված վնասների հատուցման համար:

3.1 The Performer shall perform the Work by its efforts, materials, means, tools and equipment included in the price and shall be responsible for their quality and the correct choice of their respective type.

3.2 All Performer's materials provided by the Performer shall be brand new. Usage of used, self-made materials and reprocessed items is forbidden.

**4. Risk allocation, permits and authorizations**

4.1 The risk of accidental loss or damage of the Work result shall be incurred by the Performer before its handover and acceptance by the Contractor under this Contract. The Work shall be considered to be accepted by the Contractor upon the signature of the Final Acceptance Act of the Work by the Contractor.

4.2 The Performer shall acquire all necessary permits and authorisations from relevant state bodies necessary for performance and handover of the Work in accordance with legislation of Armenia.

4.3 The Performer shall be responsible for all possible negative consequences, incurred by the Contractor caused by non-performance or non-proper performance of the obligations provided in Clause 4.2. of this Contract, including reimbursement of caused damages.

| | |
|---|---|
| 4.4 Սույն Պայմանագրով սահմանված թույլտվությունների ձեռքբերման գինը ներառված է Պայմանագրի ընդհանուր գնի մեջ: | 4.4 The expenses incurred as a result of permits and authorizations receipt shall be included the in the total price of the Contract. |
| **5. Շինարարության տարածք մուտք** | **5. Access to construction site** |
| 5.1 Պատվիրատուն պարտավոր է տրամադրել Կապալառուին և նրա աշխատակիցներին բոլոր անհրաժեշտ լիազորությունները ապահովելու համար իրենց մուտքը շինարարության տարածք: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին առնվազն 24 ժամ առաջ տեղյակ պահել նման մուտքի անհրաժեշտության մասին: | 5.1 The Contractor shall provide all necessary authorizations to the Performer and its Employees to ensure their access to the construction site. The Performer shall inform the Contractor about the necessity of such access at least 24 hours before. |
| 5.2 Կապալառուն պարտավոր է տրամադրել այն աշխատակիցների ցանկը, որոնք պետք է մուտք գործեն շինարարության տարածք Պայմանագրի գործողության ողջ տարածքում: | 5.2 The Performer shall provide the list of its Employees which shall have access to the construction site during the whole duration of this Contract. |
| **6, Գինը և վճարումը** | **6. Price and payment** |
| 6.1 Աշխատանքի համար Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է<br>-----------(-------------) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: | 6.1 The total price of the Contract for the Work constitutes AMD ----------(--------------) VAT excluded. |
| 6.2 Կապալառուի գնային առաջարկում ներառված, հավելված 3-ում ներկայացված միավորի գները գործում են սույն պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում և ենթակա չեն փոփոխության: | 6.2 The unit prices fixed in Annex 3 are valid for the whole term of this Contract and are not subject to change. |
| 6.3 Աշխատանքի համար վճարումը կատարվում է հաշիվ-ապրանքագիրը և | |

| | |
|---|---|
| Վերջնական Ընդունման-Հանձնման Ակտը երկկողմանի ստորագրելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում:<br>6.4 Բոլոր վճարումները իրականացվում են բանկային փոխանցման միջոցով՝ ՀՀ դրամով: | 6.3 The payment for the Work shall be done within 30 /thirty/ days from the date of the bilateral signature of the invoice and Final Acceptance Protocol.<br><br>6.4 All payments shall be made via bank transfers in AMD. |
| 6.5 Կապալառուի կողմից Աշխատանքի ծավալի ավելի քան 10 տոկոսով Հավելված 2-ում նախատեսված ծավալից փոփոխելու անհրաժեշտության հայտնաբերելու դեպքում Կողմերից անկախ հանգամանքներով և Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրին համապատասխան ստուգումներ կատարելուց հետո նման անհրաժեշտությունը հաստատելուց և Հավելված 2-ը փոփոխելու համաձայնագիր կնքելուց հետո կամ Պատվիրատուի պահանջով Աշխատանքի ծավալի փոփոխության անհրաժեշտության դեպքում և Հավելված 2-ը փոփոխելու համաձայնագիր կնքելուց հետո, Աշխատանքի ծավալի նման փոփոխությունները հաշվի են առնվում վճարման ժամանակ, պայմանով, որ վերջնական ընդհանուր գինը սահմանված է Վերջնական Ընդունման-Հանձնման Ակտում և հաշիվ-ապրանքագրում և հաստատված է Պատվիրատուի կողմից: | 6.5 In case the Performer reveals that the volume of Work provided in the Annex 2 must be changed for more than 10% due to reasons not depending on both Parties and in case the Contractor approved such necessity after inspection performed in accordance with this Contract and executing an amendment to the Annex 2 or in case of necessity of works volume change upon the Contractor's request based on the executed amendment to the Annex 2, such changes in the volume of Work shall be taken into account when making the payment, provided the final total price is provided in the Final Acceptance Act and invoice and is approved by the Contractor. |
| **7.** Աշխատանքի կատարումը | **7.Work performance** |
| 7.1 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին, Տեխնիկական Բնութագրին, Հավելված 2-ին և 4-ին, Աշխատանքի կատարման ընթացքում Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին և ցուցումներին, ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև սովորաբար և անվերապահորեն նման Աշխատանքի | 7.1 The Performer shall perform the Work in accordance with this Contract, the Technical |

| | |
|---|---|
| կատարմանը ներկայացվող նորմերին, կանոնների և ստանդարտներին համապատասխան: | specification, Annex 2 and 4 the requirements and instructions presented by the Contractor during the Work performance, the legislation of Armenia and the norms, rules and standards generally and absolutely presented for performance of such Work. |
| 7.2 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել և նյութերը օգտագործել սույն Պայմանագրին կցված Տեխնիկական Բնութագրին համապատասխան: | 7.2 The Performer shall perform the Work and use Materials in accordance with the Technical Specification attached to this Contract. |
| 7.3 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել անձամբ: Կապալառուն Աշխատանքի կատարումը կարող է հանձնարարել ենթակապալառուի միայն Պատվիրատուի նախնական համաձայնությամբ: Կապալառուն Աշխատանքի կատարումը կարող է հանձնարարել միայն այնպիսի ենթակապալառուի, որը ունի սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքը կատարելու ՀՀ օրենսդրությամբ անհրաժեշտ լիցենզիա և/կամ թույլտվություն, ինչպես նաև Աշխատանքը կկատարի սույն Պայմանագրի պահանջներին համապատասխան: Ենթակապալառուի կողմից Աշխատանքը կատարելու դեպքում Կապալառուն շարունակում է մնալ պատասխանատու Պատվիրատուի առջև սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարման համար: | 7.3 The Performer shall perform the Work personally. The Performer shall be entitled to order the performance of the Work to a subcontractor only by prior Contract of the Contractor. The Performer may order the performance of the Work only to the subcontractor which has the necessary license and/or authorization required by RA legislation for performance of the Work, defined in this Contract as well as shall perform the Work in compliance with this Contract requirements. In case of performance of the Work by a subcontractor, the Performer remains responsible to the Contractor for proper execution of the obligations defined in this Contract. |
| 7.4 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարելիս պահպանել շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության կանոնները և այլ պարտադիր պահանջներն ու նորմերը, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Պատվիրատուի կողմից Հավելված 4-ով: Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Աշխատանքի կատարման ժամանակ կամ դրա հետ կապված Կապալառուի աշխատողներին | |

| | |
|---|---|
| և/կամ երրորդ անձանց և/կամ Կապալառուի և/կամ երրորդ անձանց գույքին պատճառված վնասի համար: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին անմիջապես տեղեկացնել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործություն ունեցող կամ առողջության և աշխատանքի անվտանգության պահանջները խախտող յուրաքանչյուր պատահարի մասին, ինչպես նաև վերջինիս ներկայացնել գրավոր զեկույց նման պատահարների վերաբերյալ, պատահարը տեղի ունենալուց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օր հետո:<br>7.5 Կապալառուն պարտավոր է մինչև Աշխատանքը սկսելը առնվազն 48 (քառասունութ) ժամ առաջ տեղեկացնել Պատվիրատուին Աշխատանքը սկսելու մասին և Պատվիրատուին ներկայացնել Աշխատանքը կատարելու հստակ և մանրամասն ժամանակացույց:<br><br>7.6 Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքը կատարելիս Կապալառուն և Կապալառուի աշխատակիցները ներկայացնում են Պատվիրատուին և հետևաբար պետք է գործեն բարձր պրոֆեսիոնալ կերպով, Պատվիրատուի շահերից ելնելով, բարեխղճորեն և ողջամտորեն:<br><br>7.7 Աշխատանքը կատարելիս Կապալառուն պարտավորվում է գործի դնել նման կապալառուի ամբողջ ողջամիտ ուշադրությունը և հմտությունները՝ նման Աշխատանքի կատարման համար ընդունված ընդհանուր ստանդարտներին համապատասխան:<br><br>7.8 Ենթադրվում է, որ Կապալառուն ունի ամբողջական պատկերացում իրականացվող Աշխատանքի ծավալի և բնույթի վերաբերյալ և | 7.4 The Performer shall comply to all environmental, health and work safety and other mandatory requirements and norms provided by the legislation of Armenia and the Performer as per Annex 4 when performing the Work. The Contractor shall not be responsible for the damages caused to Performer's employees and/or third persons and/or the property of third persons during performance of the Work or related to it. The Performer shall inform immediately the Contractor for each occurred incident which has negative effect on the environment or breaches the health and safety requirement as well as shall submit a written report to Contractor for such incident not later that one business day as from its occurrence.<br><br>7.5 The Performer shall inform the Contractor at least 48 (forty eight) hours prior to start of the Work and provide a clear and detailed schedule of Work.<br><br>7.6 When performing the Work defined in this Contract, the Performer and the Performer's Employees represent the Contractor, thus they shall act in highly professional way, for the interests of the Contractor, in good faith and reasonably. |

| | |
|---|---|
| ունի Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային և այլ պարագաներ, որոնք սահմանված են սույն Պայմանագրում կամ որոնց այլ կերպ հղում է արվում կամ որոնք այլ կերպ անհրաժեշտ են նման Աշխատանքների կատարման համար: | 7.7 When performing the Work the Performer shall use all reasonable care and skills of the performer of such Work in accordance with the generally accepted standards for performance of such Work. |
| 7.9 Կապալառուն պարտավոր է կատարել օրենսդրական և սույն Պայմանագրով նախատեսված պահանջները՝ շարժական օբյեկտների ժամանակավոր տեղակայման վայրում անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման, աշխատանքի անվտանգության ապահովման համակարգի, ֆիզիկական ուժի գործադրմամբ նյութերի տեղափոխման և անվտանգության այլ պահանջներ:<br>7.10 Սույն Պայմանագրի 7.1-7.9 կետերի պահանջների չկատարումը կարող է հանգեցնել Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի դադարեցման: | 7.8 The Performer shall be deemed to have full knowledge of the extent and nature of the Work and to be allowed for all items of work shown upon, described by or referred to in this Contract or which are otherwise necessary to perform such Works. |
| **8. Աշխատանքի ընդունումը** | |
| 8.1 Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ ստուգել Կապալառուի կատարած Աշխատանքի ընթացքը և որակը Աշխատանքի կատարման ընթացքում առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը: Այդպիսի հսկողության իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելիս Պատվիրատուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կապալառուին:<br>8.2 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Աշխատանքը ընդունելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է անհնար: | 7.9 The Performer shall satisfy the applicable legal requirements and the requirements under this Contract for the use of personal protection equipment on temporary sites of movable objects, for safety warning system, upon establishing of a manual material transportation and in all other aspects of safety.<br>7.10 Non-fulfilment of the requirements mentioned in Clauses 7.1-7.9 shall be a ground |

8.3 Պատվիրատուի կողմից Աշխատանքի ստուգման ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուն պարտավոր է վերացնել հայտնաբերված թերությունները և համապատասխանեցնել Աշխատանքը Պատվիրատուի պահանջներին 5 (հինգ) օրվա ընթացքում: Հայտնաբերված թերությունները Պատվիրատուի նշանակած ժամկետում Կապալառուի կողմից չվերացնելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Աշխատանքը կատարել սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով ողջամիտ ժամկետում և/կամ պահանջել վճարել տույժ խախտման յուրաքանչյուր դեպքի համար Պայմանագրի ընդհանուր գնի 20 տոկոսի չափով և և/կամ Կապալառուի հաշվին թերությունները վերացնելը հանձնարարել այլ անձանց, ինչպես նաև պահանջել հատուցելու վնասները:

8.4 Աշխատանքը ավարտելուց հետո Կապալառուն այդ մասին անմիջապես տեղեկացնում է Պատվիրատուին կատարված Աշխատանքի ստուգում իրականացնելու և ընդունելու համար: Աշխատանքի ստուգումը իրականացվում է Կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

8.5 Աշխատանքի արդյունքի ստուգման արդյունքում սույն Պայմանագրով սահմանված կարգով Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուի հետ կազմվում է Միջանկյալ Ընդունման-հանձնման Ակտ, որտեղ նշվում է, որ Աշխատանքը ընդունված է վերապահումով: Այդպիսի ընդունման-հանձնման ակտը համարվում է թերությունների ակտ, որտեղ սահմանվում են Աշխատանքի արդյունքում հայտնաբերված թերությունները և դրանց վերացման

for unilateral termination of the Contract by Contractor.

## 8. Acceptance of the Work

8.1 The Contractor shall be entitled to check the process and the quality of the Work during performance by the Performer at its discretion without interfering Performer's activity. Should deficiencies be discovered as a result of such inspection, the Contractor shall immediately inform the Performer.

8.2 The Contractor shall be entitled to refuse acceptance of Work and to request reimbursement of the damages caused thereby, if the Performer does not start performance of the Work on time or performs the Work so slowly that its termination on time becomes impossible.

8.3 In case deficiencies are discovered by the Contractor during checking of the Work, the Performer shall eliminate the discovered deficiencies and comply the Work with the requirements of the Contractor within 5 (five) days. Should the Performer fail to eliminate the deficiencies within the term, defined by the Contractor, the Contractor shall be entitled to request performance of the Work under the terms and conditions of this Contract and legislation of Armenia, by fixing a reasonable term and/or request payment of a penalty in the amount of 20% of

| | |
|---|---|
| ժամկետները, եթե Պատվիրատուն պահանջում է թերությունների վերացում:<br>8,6 Թերությունների վերացումից, ինչպես նաև 6-րդ կետի համաձայն անհրաժեշտության դեպքում գնային փոփոխությունների դեպքում Վերջնական Ընդունման-հանձնման Ակտը հաստատվում և երկկողմանի ստորագրվում է Կողմերի կողմից՝ հաստատելով Աշխատանքի ընդունումը: | the total price the breach of each case and/or assign elimination of the deficiencies at the expense of the Performer to other persons, as well as request reimbursement of the damages caused. |
| **9. Թերությունների վերացումը** | 8.4 Upon completion of the performance of the Work, the Performer shall immediately inform the Contractor to perform inspection and acceptance of the Work performed. The inspection of the Work shall be performed with participation of the representatives of the Parties. |
| 9.1 Գործող օրենսդրության և/կամ սույն Պայմանագրի խախտմամբ Աշխատանքի կատարման կամ Աշխատանքի թերություններով կամ ոչ ամբողջական կատարման, որոնք դարձրել են Աշխատանքի արդյունքը օգտագործման համար ոչ պիտանի կամ Աշխատանքի ոչ ամբողջական կամ թերի կամ թերությամբ կատարման դեպքում Կապալառուն պարտավոր է Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի ընթացքում, որը չպետք է գերազանցի 5 (հինգ) օրը անվճար նորից կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի թերությունները: Աշխատանքի պատշաճ կատարման համար Կապալառուին տրամադրված վերոնշյալ ժամկետը վերջինիս չի ազատում սույն Պայմանագրով սահմանված տույժերը վճարելու իր պարտավորությունից: Եթե վերոնշյալ ժամկետում Կապալառուին չի հաջողվում նորից պատշաճ կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի մեջ հայտնաբերված թերությունները կամ չի հաջողվում վերացնել դրանք ամբողջությամբ կամ եթե դրանք էական | 8.5 In case of revealed deficiencies, an Interim Acceptance Protocol shall be executed with the Performer defining that the Work has been accepted with reserves. Such Interim Acceptance Protocol shall be deemed as a deficiency act, where should be defined the deficiencies discovered in the Work result and the terms for their elimination if the Contractor requests elimination of the deficiencies.<br><br>8.6 After elimination of all deficiencies as well as in cases of necessary price adjustments as per Clause 6, Final Acceptance Protocol shall be approved and bilaterally signed by |

| | |
|---|---|
| կամ չվերացող են, Պատվիրատուն բացառապես իր հայեցողությամբ իրավասու է՝<br><br>9.1.1 Կապալառուից պահանջել Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 0,1 տոկոսի չափով ուշացման յուրաքանչյուր օրվա համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:<br><br>9.1.2 հրաժարվել չկատարված Աշխատանքի ընդունումից և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 8 տոկոսի չափով խախտման յուրաքանչյուր դեպքի համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:<br><br>9.1.3 պահանջել համաչափ նվազեցնելու Աշխատանքի համար սահմանված գինը և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 8 տոկոսի չափով խախտման յուրաքանչյուր դեպքի համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն.<br><br>9.1.4 պահանջել հատուցելու թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 8 տոկոսի չափով խախտման յուրաքանչյուր դեպքի համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն.<br><br>9.2 Պատվիրատուն իրավասու է նաև Կապալառուի հաշվին և ռիսկով անձամբ կամ | the Parties certifying the acceptance of Work.<br><br>**9. Elimination of deficiencies**<br><br>9.1 In case the Work is performed with breach of the applicable legislation and/or this Contract or with deficiencies or partially, which have made the Work result unsuitable for use, the Performer shall perform the Work again or eliminate the deficiencies of the Work performed free of charge, within the term, agreed between the Parties, which in no case shall exceed 5 (five) days. The mentioned term provided to the Performer for proper performance of the Work, does not release the Performer from the liability to pay the penalties, provided in this Contract. Should the Performer within the mentioned term again fail to eliminate the deficiencies revealed or if such deficiencies are essential and cannot be eliminated, the Contractor shall be entitled, at its sole discretion, to: |

իր կողմից ընտրված երրորդ անձի միջոցով պատշաճ տեսքի բերել կատարված Աշխատանքը կամ ավարտին հասցնել դրա կատարումը: Կապալառուն պարտավոր է այս հարցում աջակցել Պատվիրատուին և նրան տրամադրել այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

9.3 Եթե կատարված Աշխատանքի միայն մի մասն է թերի, ապա Պատվիրատուն իր հայեցողությամբ իրավասու է ընդունել Աշխատանքի միայն այն մասերը, որոնք զերծ են թերություններից՝ համամասնորեն վճարելով դրանց համար:

## 10. Երաշխիքային ժամկետ

10.1 Կատարված աշխատանքների երաշխիքային ժամկետը կազմում է Վերջնական Ընդունման-հանձնման ակտի երկկողմանի ստորագրման ամսաթվից մինչև 12 ամիս:

10.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում երաշխիքային ժամկետի սահմաններում հայտնաբերված թերությունների համար և պարտավոր է անհատույց վերացնել դրանք այդ մասին Պատվիրատուի կողմից Կապալառուին տեղեկացնելու պահից 5 (հինգ) օրվա ընթացքում: Երաշխիքային ժամկետի ընթացքում հայտնաբերված թերությունների հետ կապված կիրառվում են սույն Պայմանագրի 9 կետով սահմանված դրույթները:

10.3 Երաշխիքային ժամկետը երկարաձգվում է այն ժամանակով, որի ընթացքում Աշխատանքի արդյունքը չի կարող շահագործվել դրանում հայտնաբերված թերությունների պատճառով:

9.1.1 request the Performer to perform the Work in accordance with this Contract within the reasonable term, defined by the Contractor and to pay a penalty in the amount of 0.1% of the total price for each delayed day, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.

9.1.2 refuse acceptance of the non-performed Work and request to pay a penalty in the amount of 8% of the total Contract price for each case of breach, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.

9.1.3 to request to reduce proportionally the price defined for the Work and to pay a penalty in the amount of 8% of the total Contract price for each case of breach, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.

9.1.4 request to reimburse the expenses incurred by the Contractor to eliminate the deficiencies and to pay a penalty in the amount of AMD 8% of the total Contract price for each case of breach, as well as reimburse the damages caused, in accordance with this Contract and the applicable legislation.

9.2 The Contractor shall be entitled at its discretion itself or through a third person at

| | |
|---|---|
| 10.4 Երաշխիքային սպասարկման ընթացքում թերությունների վերացման սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում ուշացման յուրաքանչյուր օրվա համար Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Կապալառուից վճարել տույժ Պայմանագրի գնի 0,1 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար: | Performer's risk and expense complete the Work. The Performer shall assist the Contractor therein and notably hand over all documents necessary for that purpose. |
| **11. Աշխատանքների կատարման ժամկետը**<br><br>11.1 Աշխատանքի կատարման ժամկետը սահմանվում է համաձայն Պատվիրատուի ժամանակացույցի, որը ներկայացված է տեխնիկական առաջադրանքում (հավելված 2), մասնավորապես պայմանագրի երկկողմանի կնքման պահից ոչ ավել, քան -------(-----) օրացուցային օրվա ընթացքում: | 9.3 If only part of the Work performed is defective, the Contractor shall be entitled at its discretion accept only those parts that are free from defects and pay proportionally for them.<br><br>**10. Warranty period.** |
| **12. Պատասխանատվություն**<br><br>12.1 Սահմանված ժամկետներում աշխատանքները չկատարելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից պահանջել վճարել տուգանք 6-րդ կետով սահմանված պայմանագրի ընդհանուր գնի 0,2%-ի չափով յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար:<br>12.2 Սույն պայմանագրի 7-րդ կետով և Հավելված 4-ով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից պահանջել վճարել տուգանք 6-րդ կետով սահմանված պայմանագրի գնի 8%-ի չափով 7-րդ կետով և Հավելված 4-ով նախատեսված յուրաքանչյուր պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար բանակցությունների | 10.1 The warranty period of the completed works shall be 12 /twelve/ months from the date of bilateral signature of Final Acceptance Protocol.<br><br>10.2 The Performer shall be held liable for the deficiencies discovered during the warranty period and shall eliminate such deficiencies free of charge within 5 (five) days upon notification of the Contractor. The terms defined in Clause 9 shall be applicable regarding the deficiencies elimination during the warranty period. |

| | |
|---|---|
| արձանագրությանը համապատասխան (հավելված 3):<br>12.3 Սույն Պայմանագրով և հավելվածներով նախատեսված ցանկացած պարտավորության չկատարման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Կապալառուից վճարել տուժանք, եթե կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին: Նման Աշխատանքը համարվում է չկատարված և Կապալառուն պարտավորվելու է վճարել տուգանք 12.1 կետով սահմանված չափով մինչև այն ամսաթիվը, երբ Աշխատանքը կկատարվի պահանջներին համապատասխան:<br>12.4 Եթե Կապալառուն խախտում է ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև սույն պայմանագրի 7-րդ կետով և Հավելված 4-ով սահմանված շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության պահանջները, ապա Պատվիրատուն կարող է դադարեցնել Կապալառուի աշխատանքները ( աշխատանքների դադարեցման տևողությունը կախված կլինի խախտման ծանրության աստիճանից): Ստուգում անցկացնելուց և Կապալառուի կողմից ներկայացված ուղղիչ միջոցառումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո, Պատվիրատուն կարող է թույլատրել կամ արգելել շարունակել աշխատանքները: Պայմանագրի ժամկետը չի երկարացվելու աշխատանքների դադարեցման ժամկետով: Նման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի պահանջել, որպեսզի Կապալառուն կազմակերպի և պայմանագրում ներգրավված իր անձնակազմի հետ անցկացնի շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության դասընթաց՝ առնվազն 16 ժամ տևողությամբ:<br>12.5 Կապալառուն պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետում սահմանված | 10.3 The warranty period shall be prolonged by the time period during which the Work result cannot be used because of discovered deficiencies.<br><br>10.6 Should the Performer fail to meet the terms for elimination of the deficiencies during the warranty service, the Contractor shall be entitled to request the Performer to pay a penalty for delinquency of each day in the amount of 0,1 % of the total Contract price for each delayed day.<br><br>**11. Term**<br><br>11.1 The term for performance of the Work is according to the timetable of Contractor, specified in the technical specification – Annex 2, in particular not more than ----------(--------) calendar days after the bilateral signature of this Contract.<br><br>**12. Responsibility**<br><br>12.1 Should the Performer be in delay of the performance of the Work, the Contractor is entitled to request the Performer to pay penalties amounting to 0,2% of the Contract total price set in Clause 6 for each day of delay. |

| | |
|---|---|
| պարտավորությունների խախտման համար: Կապալառու պարտավոր է Պատվիրատուին հատուցել երաշխիքային ժամկետում սահմանված պարտավորությունների խախտման արդյունքում պատճառված վնասը ամբողջությամբ:<br><br>**13. Պայմանագրի դադարեցում**<br><br>13.1 Սույն Պայմանագիրը դադարեցվում է<br>13.1.1 պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում, բացառությամբ եթե Կողմերը ունեն չկատարված պարտավորություններ:<br>13.1.2 երկու կողմերի գրավոր համաձայնությամբ:<br>13.2 Սույն Պայմանագիրը կարող է միակողմանիորեն դադարեցվել Պատվիրատուի կողմից<br>13.2.1 ցանկացած խախտման դեպքում՝ 15 օր առաջ Կապալառուին գրավոր ծանուցում ուղարկելով,<br>13.2.2 առանց պատճառի՝ 15 օր առաջ Կապալառուին գրավոր ծանուցելով և վճարելով կատարված և ընդունված աշխատանքների համար:<br>13.3 Պայմանագրի 13.2.1 կետով սահմանված պայմաններով Պայմանագիրը դադարեցվելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի պահանջել 12 կետով սահմանված տուգանքները:<br>Պատվիրատուն կարող է հաշվանցել նախքան պայմանագրի դադարեցումը կատարված աշխատանքի դիմաց Կապալառուին հասանելիք բոլոր գումարները՝ վերը նշված տուգանքների հետ:<br><br>**14. Ֆորս մաժոր**<br><br>14.1 Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ | 12.2 Should the Performer fail to fulfil any of its obligations under the Clause 7 and Annex 4, the Contractor is entitled to pay penalties amounting to 8 % of the Contract Price set in Clause 6 for each requirement non-fulfilment or non-proper fulfilment provided in Clause 7 and Annex 4 in accordance with the Negotiation Protocol – Annex 3.<br><br>12.3 Should the Performer fail to fulfill any of the obligations provided in this Contract and its annexes, the Contractor is entitled to request from the Performer to pay penalties in case the performed Work do not comply to the terms of the Contract. The Work shall be deemed not performed and the Performer shall be liable to pay penalties as per Clause 12.1 until the date the Work is performed in compliance with the requirements.<br><br>12.4 Should the Performer violate the health and safety requirements specified in the legislation of Armenia, Clause 7 and Annex 4, the Contractor is entitled to suspend the Performer's activities (the term of the suspension shall depend on the gravity of the violation). After an inspection is performed |

| | |
|---|---|
| պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել ֆորս մաժորի ազդեցության պատճառով, որն առաջացել է սույն Պայմանագրի ստորագրումից հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համարվում. երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, արտակարգ կամ ռազմական դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, հաղորդակցման ուղիների խափանումը, կառավարական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե ֆորս մաժորի ազդեցությունը տևում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով մյուս Կողմին: | and proposed by the Performer remediation plan is approved, the Contractor shall have the right to allow or to ban the continuation of the works. The term of the Contract shall not be prolonged with the term of the suspension. In this case Contractor may request from the Performer to organize and hold a health and safety course to its personal who is engaged with the execution of the Contract with duration of not less than 16 hours. |
| **15. Լրացուցիչ դրույթներ** | 12.5 The Performer shall bear responsibility for breach of warranties, defined in this Contract. The Performer shall fully reimburse the damage caused to the Contractor as a result of breach of such warranties. |
| 15.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից պարտավորությունների ամբողջական կատարումը:<br>15.2 Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն երկու Կողմերի կողմից քննարկված և ստորագրված առանձին համաձայնությամբ: Փոփոխությունները կհամարվեն օրինական, եթե Կողմերը դրանք իրականացրել են սույն Պայմանագրի ձևով՝ ստորագրելով մեկ ընդհանուր փաստաթուղթ:<br>15.3 Սույն Պայմանագիրը ղեկավարվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրությամբ: | **14. Contract termination**<br><br>13.1 This Contract is terminated in case of:<br>13.1.1 expiration of the term of the Contract unless Parties have non-fulfilled obligations. |
| 15.4 Սույն Պայմանագրով բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն | |

| | |
|---|---|
| էլեկտրոնային նամակով, հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ սույն Պայմանագրում նշված հասցեներով: | 13.1.2 mutual agreement by both parties, expressed in writing. |
| 15.5 Սույն պայմանագիրը կազմվել է երկու հավասարազոր բնօրինակով՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Լեզուների միջև անհամապատասխանության դեպքում, նախապատվությունը տրվում է հայերեն լեզվին: | 13.2 This Contract can be terminated unilaterally by the Contractor:<br><br>13.2.1 In case of any violation with 15 days written notice submitted to the Performer, |
| 15.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ դատարաններին: | 13.2.2 without cause with 15 days written notice to Performer and upon payment for the actually performed and accepted works. |
| 15.7 Կողմերը հաստատում են, որ սեփական բիզնեսը և ներքին հարաբերությունները կազմակերպելու ժամանակ՝ Պատվիարտուն և Կապալառուն առաջնորդվում են Պատվիրատուի Հակակոռուպցիոն քաղաքականություն (հավելված 5), Մատակարարի վարվեցողության կանոնագիրք (հավելված 6) և Վաճառողի հավաստագրում – պատժամիջոցների մասին օրենսդրության պահանջներ (Հավելված 7) քաղաքականություններին: Կողմերը պարտավորվում են չներգրավվել որևէ գործունեության, որը կարող է ենթադրել տվյալ քաղաքականության պահանջների խախտում կամ հանգեցնել խախտման: Կողմերը համաձայնվում են, որ ցանկացած համաձայնագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների հետ կապված, լինի գրավոր կամ այլ կերպ, ոչ՛ կողմերից որևէ մեկը, ոչ՛ էլ նրա ղեկավարները, աշխատակիցները, դուստր ընկերությունները կամ նրա գիտությամբ՝ գործակալները կամ | 13.3 In case of termination of the Contract as per Clause 13.2.1 the Contractor shall be entitled to receive penalties as per Clause 12.<br><br>The Contractor has the right to set off all amounts that are due to the Performer for the work done before termination with the penalties amount mentioned above.<br><br>**14. Force majeure**<br><br>14.1 The Parties shall be exonerated from the liability for non-execution or half execution of the obligations envisaged by this Contract, if it is the result of the force majeure influence |

| | |
|---|---|
| ներկայացուցիչները ուղղակի կամ անուղղակի ձևով չեն առաջարկի, խոստանա կամ թույլատրի նվերի տրամադրում կամ արժեքավոր որևէ այլ բանի վճարում, այդ թվում՝ առանց սահմանափակման, չեն կիսվի կամ չեն խոստանա կիսվել որևէ վճարումներով կամ դրամական այլ միջոցներով, որոնք ստացել են, ստանում են կամ կստանան ՔոնթուրԳլոբալի հետ որևէ համաձայնագրի շրջանակներում՝ ի շահ կամ ի օգուտ որևէ պետական պաշտոնյայի կամ որևէ պետական պաշտոնյայի ընտանիքի անդամի կամ մտերիմ գործընկերոջ, ոչ պատշաճ կերպով՝ (ա) ազդելով պետական պաշտոնյայի պաշտոնական դիրքով պայմանավորված որևէ գործողության կամ որոշման վրա, (բ) դրդելով պետական պաշտոնյային անել կամ չանել որևէ գործողություն՝ իր պաշտոնեական պարտականությունների խախտմամբ, (գ)ստանալով որևէ ոչ պատշաճ առավելություն, կամ (դ) դրդելով պետական պաշտոնյային օգտագործել իր ազդեցությունը կառավարության որևէ որոշման կամ ակտի վրա ազդելու համար (վերոնշյալ «Արգելված վճարումներից» որևէ մեկը): Կողմերը պետք է անհապաղ զեկուցեն մյուս կողմին ցանկացած Արգելված վճարման մասին:<br><br>15.8 Սույն Պայմանագրի հավելվածները վերջինիս անբաժանելի մասն են կազմում և հետևյալն են.<br><br>Հավելված 1՝ Շահերի բախման մասին հայտարարագիր<br>Հավելված 2՝ Տեխնիկական բնութագիր և նախահաշիվ | which has arisen after signing this Contract and which Parties could not foresee and prevent. The mentioned situations are earthquake, inundation, fire, war, declaration of state of emergency or martial law, political movements, termination of the means of communication work, governmental bodies' acts, etc., which make impossible the execution of the obligations envisaged by this Contract. If the force-majeure continues more than 3 (three) months, each Party shall be entitled to terminate this Contract with a prior notice.<br><br>**15. Supplementary provisions**<br><br>15.1 The Contract shall enter into force upon bilateral signature and shall be valid till full performance of obligation of the Parties.<br><br>15.2 The amendments and additions to this Contract shall be discussed by the Parties mutually and defined in a separate amendment. The amendments shall be valid if the Parties have executed them in the form |

| | |
|---|---|
| Հավելված 3՝ Բանակցության արձանագրություն և գնային առաջարկ<br>Հավելված 4՝ Տեխնիկական անվտանգության ապահովման պահանջներ<br>Հավելված 5՝ Պատվիրատուի հակակոռուպցիոն կանոնակարգ և համապատասխանելիության հայտարարագիր<br>Հավելված 6՝ Մատակարարի վարվելագծի կանոնակարգ<br>Հավելված 7՝ Վաճառողի հավաստագրում-Պատժամիջոցների օրենսդրություն | of this Contract by executing one mutual document.<br><br>15.3 This Contract shall be governed by and interpreted in accordance with legislation of Armenia.<br><br>15.4 All notices of this Contract shall be by e-mail, fax or written letter, by the addresses defined in this Contract. |
| Պատվիրատու՝<br><br>«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ<br><br>բ/հ 15700-17462030100<br><br>ՀՎՀՀ՝ 02619957<br>Հասցե՝ Երևան, Մելիք Ադամյան 2/2<br><br>Տնօրեն՝ ---------------Արա Հովսեփյան.<br><br>Կապալառու՝<br><br>------------- | 15.5 The present Contract was signed in two identical originals in Armenian and in English language. In the event of conflict between the English and Armenian language versions of this Contract, the Armenian language version shall prevail.<br>15.6 All disputes in relation to the Contract should be solved by negotiations between the parties hereto. In case the latter is impossible the dispute should be brought before the competent court of the Republic of Armenia.<br><br>15.7 The Parties acknowledge that in conducting their business and managing their internal relations, both the Performer and the Contractorr operate by reference to the principles contained in the Contractor's Anticorruption Policy – Annex 5, the Supplier Code of Conduct – Annex 6 and Vendor Certificate – Sanctions Laws - Annex 7 Policies. The Parties shall not engage in any conduct that would constitute a breach of these Policies or would result in a breach of these Policies. The Parties agree that, with respect to the services provided under any agreement, whether written or otherwise, |

| | |
|---|---|
| | neither it nor any of its principals, employees, affiliates, or to its knowledge, agents or representatives will directly or indirectly, make, promise or authorize the making of any offer, gift or payment of anything of value, including without limitation, the sharing or promise to share its fees or any other funds that it has received, receives or will receive under any agreement with ContourGlobal, to or for the benefit of any Government Official or family member or close business associate of any Government Official, for the purpose of improperly: (i) influencing any act or decision of the Government Official in his or her official capacity; (ii) inducing the Government Official to do or omit to do any act in violation of his or her lawful duty; (iii) securing any improper advantage; or (iv) inducing the Government Official to use his or her influence to affect any governmental act or decision (any of the foregoing a "Prohibited Payment").<br><br>The Parties shall promptly report to the other any Prohibited Payment. |

| | |
|---|---|
| | 15.8 Annexes to this Contract are integral part of the present Contract are the following:<br><br>Annex 1 – Declaration of conflict of interests;<br><br>Annex 2 – Technical Specification and Bill of Quantity<br><br>Annex 3 – Negotiation protocol and Price offer;<br><br>Annex 4- Health and Safety requirements<br><br>Annex 5 – Contractor's Anticorruption Policy and Anticorruption policy compliance statement;<br><br>Annex 6 - Supplier Code of Conduct<br><br>Annex 7 – Vendor Certificate – Sanctions Laws<br><br>CONTRACTOR |

| | |
|---|---|
| | **"CONTOURGLOBAL HYDRO CASCADE" CJSC**<br><br>Ameriabank CJSC<br><br>b/a: 15700-17462030100<br><br>TIN: 02619957<br>Address: 2/2 Melik Adamyan Str., Yerevan<br><br>DIRECTOR---------ARA HOVSEPYAN:<br><br>**PERFORMER:**<br><br>--------------- |

| | |
|---|---|
| CONTOURGLOBAL<br>Հիդրո կասկադ | TECHNICAL SPECIFICATION<br>Տեխնիկական բնութագիր |
| | *Document no.*<br>*Փաստաթղթի N* — *Sheet* *էջ* 1 - 12 |

| | | |
|---|---|---|
| *Project*<br>*Նախագիծ* | Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասի վրա եզրային արգելապատեր<br>Barrier walls on the upper part of the dam of Shamb and Spandaryan rezervoirs | |
| *Title*<br>*Անվանում* | Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասի վրա եզրային արգելապատեր<br>Barrier walls on the upper part of the dam of Shamb and Spandaryan rezervoirs | |

| *System*<br>*Համակարգ* | *Document Type*<br>*Փաստաթղթի տեսակ* | *Discipline*<br>*Կարգ* | *File*<br>*Ֆայլ* |
|---|---|---|---|

| REV<br>Վերանայում | *Description of Revisions/Վերանայման նպատակ* |
|---|---|
| 0 | FOR TENDER (TR)<br>Մրցույթի համար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 0 | 12.06.2017 | TR<br>Մրցույթ | N.Zalyan<br>Ն.Զալյան | A.Gasparyan<br>Ա.Գասպարյան | A. Yolyan<br>Ա. Յոլյան |
| REV<br>Վերանայում | Date<br>Ամսաթիվ | Scope<br>Ծավալ | Agreed<br>Համաձայնեցված է | Checked<br>Ստուգել է | Approved<br>Հաստատել է |

1. Օբյեկտի ընդհանուր պայմանները և առանձնահատկությունները
General Conditions and characteristics of the site :

1.1. ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադը բաղկացած է Հայաստանի հարավ արևելքում գտնվող Որոտան գետի վրա տեղակայված 3 հիդրոկայաններից: ՔԳ հիդրո կասկադի ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 404 մՎտ. Կասկադի հիմնական տվյալները ներկայացված են ստորև:
ContourGlobal Hydro Cascade consists of 3 HPP's situated on the Vorotan River in the southeastern part of Armenia. The total installed capacity of the CG Hydro Cascade is 404 MWT. The key data of the cascade's power stations are given below:

Աղյուսակ՝ ՔԳ հիդրո կասկադի հիմնական տվյալները
Table: Key data of the CG Hydro Cascade

| Հիդրոէլեկտրակայան Hydropower Stations | Նախագծային հզորությունը, մՎտ Rated Capacity MW | Ագրեգատների քանակը և հզորությունը Number & capacity of units, MW | Ջրամբարների հզորությունը, միլ մ3 Ընդամենը/փաստացի Water storage, mill.m$^3$ total / live | Նախագծային հաշվարկային ճնշումը Design Head m | ՀԷԿ-ի թողարկումը Commissioning of the HPP |
|---|---|---|---|---|---|
| Սպանդարյան Spandaryan | 76 | 2 x 38.0 | 257 / 218 | 300 | 1989 |
| Շամբ Shamb | 171 | 2 x 85.5 | 96 / 80 | 267 | 1978 |
| Տաթև Tatev | 157.2 | 3 x 52.4 | 13,6 / 1,8 | 552 | 1970 |

1.2. Շրջակա միջավայրի ընդհանուր պայմաններ/General environmental conditions:

- Մթնոլորտային ջերմաստիճանը (մաքս)՝ Շամբ ավանում+30˚C. Սպանդարյան-ջրամբարում+30˚C.
  Ambient temperature (max):-in Shamb : +30˚C. ,Spandar reservoir +30˚C.

- Մթնոլորտայինջերմաստիճանը(մին) - Շամբ ավանում-30˚C. Սպանդարյան-ջրամբարում-30˚C.
  Ambient temperature (min): in Shamb : -30˚C. ,Spandar reservoir -30˚C.
- Նոմինալ հարաբերական խոնավություն՝ 73%
  Nominal relative humidity: 73%

1.3 Տեղանքի բարձրությունը ծովի մակարդակից Շամբ ջրամբարի պատվարի վրա 1336մ, Սպանդարյան ջրամբարի պատվարի վրա 2065մ:

Height of the site above sea level in Shamb reservoir 1336m, Spandaryan reservoir2065m:

2. Աշխատանքների մանրամասն նկարագրությունը
Detailed description of the scope:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել պայմանագիրը կնքելուց 45 օր անց:

Construction work is planned to be finished within 45 days after signing the contract.

| | |
|---|---|
| 2.1..Շամբի ջրամբարի պատվարի վերնամասի վրա դեպի ներքին բիեֆ անվտանգության նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է կառուցել արգելապատ; Այն պետք իրականացնել բետոնե հիմքով մետաղական կանգնակների վրա մոնտաժված թերթավոր պողպատից արգելափակոցներով, որի վրա տեղադրվում է անդրադարձիչ նշաններ:<br>2.2.Սպանդարյան ջրամբարի պատվարի վերնամասի վրա դեպի ներքին բիեֆ անվտանգության նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է կառուցել արգելապատ; Դրա համար պետք է ապամոնտաժել գոյություն ունեցող բոլոր ճանապարհային բետոնե եզրասյուները և տեղադրել բետոնե հիմքով մետաղական կանգնակների վրա թերթավոր պողպատից արգելափարոցներ, որի վրա տեղադրվում է անդրադարձիչ նշաններ:<br>2.3. Ծածկվող աշխատանքները անխտիր ձևով պետք է արձանագրվի պատվիրատուի ներկայացուցիչի մասնակցությամբ, որից հետո կապալառուն թույլատվություն կստանա կատարելու հաջորդող աշխատանաքները:<br>2.4. Շինարարությունը պետք է իրականացվի համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի, շինարարական, սանիտարական նորմերի, ներկայացվող ծավալաթերթի և տեխբնույթագրի: | 2.1 For safety reasons a barrier wall needs to be built on the upper part of the dam of Shamb reservoir. It should be implemented with metal sheet barriers installed on metal racks on which reflector signs are placed.<br><br>2.2 For safety reasons a barrier wall needs to be built on the upper part of the dam of Spandaryan reservoir. Therefore, it is necessary to dismantle the existing slope and sedimentary concrete bollards, replace the useless ones and install new ones. It should be implemented with metal sheet barriers installed on metal racks on which reflector signs are placed.<br><br>2.3. All the covered work should be by all means protocoled with participation of the representative of the Contracting Authority, after which the contractor will have a permission to continue with the next work.<br><br>2.4. Construction should be carried out in accordance with the actual legal acts of the Republic of Armenia, construction sanitary norms and presented scope of work. |
| | |

| | |
|---|---|
| -Կապալառուն Աշխատանքը իրականացնում է իր ուժերով, նյութերով, միջոցներով, գործիքներով և սարքավորումներով, որոնք ներառված են գնում և պատասխանատվություն է կրում դրանց որակի, ինչպես նաև տեսակի ճիշտ ընտրության համար: | -Contractor shall carry out the Work by its own means, materials, funds, tools and equipment which are included in the price and shall be responsible for their quality as well as for the selection of the right type. |
| -Կապալառուի կողմից տրամադրվող բոլոր նյութերը պետք է լինեն նոր: Օգտագործված, ինքնաշեն նյութերի և վերամշակված պարագաների օգտագործումն արգելված է: | -All the materials provided by Contractor should be new. Forbidden is the use of used, improvised materials and recycled supplies. |
| **2.2** Շինաշխատանքները պետք է կատարել համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի, նորմերի և Եվրոպական ստանդարտներին համապատասխան: | **2.2** The construction works should be implemented in accordance with the current legal acts, norms of the Republic of Armenia, and European standards. |
| 2.2.1 Շինաշխատանքներին մասնակցող կազմակերպությունից պահանջվում է ունենալ առնվազն 1 աշխատակից 3 տարվա մասնագիտական փորձով նմանատիպ աշխատանքներում: Կից ներկայացնել համապատասխան փաստաթղթերի պատճենները (աշխատանքային պայմանագրեր և անձնագրերի պատճեններ): | **2.2.1** The companies participating in the construction and repair works are required to have at least 1 employees having 3 years of professinal experience in this field. They are also required to submit copies of their documents (work contracts and copies of passports). |
| 2.2.2 Շինաշխատանքներին մասնակցող կազմակերպությունից պահանջվում է ներկայացնել համապատասխան փաստաթղթեր նրա մասին որ՝ վերջին 3 տարիների ընթացքում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի 50%-ից, որից առնվազն 1 պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ տվյալ | **2.2.2** The Company participating in the construction and repair works is required to submit relevant documents stating that the volume of work (expressed in amount) done in the course of the last 3 years is not less than 50% of the sum of price offer made by the participant within the scope of this purchase, out of which the volume of work implemented under one contract expressed in amount is not less than 20% of the sum of price offer made by the participant within the scope of |

| | |
|---|---|
| գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացված գնային առաջարկի 20%-ից: Կից ներկայացնել համապատասխան փաստաթղթերի պատճենները (պայմանագիր, հանձման և ընդունման ակտ): 2.2.3 Շինաշխատանքներին մասնակցող կազմակերպությունից պահանջվող տեխնիկական միջոցներն են Ինքնաթափ ավտոմեքենա-1հատ Եռակցման ագրեգատ 1- հատ Ներկայացնել սեփականության վկայականի կամ վարձակալության պայմանագրի պատճենները: 2.2.4 Շինաշխատանքներին մասնակցող կազմակերպությունից պահանջվում է ներկայացնել՝ քաղաքացիական (բնակելի, հասարակական) լիցենզիայի պատճեն: | this purchase. In attachment submit copies of relevant documents (contract, Act of acceptance). 2.2.3 The Company participating in the construction and repair works are required to have the following machinery - Dumper truck – 1pc - 1 compressor with jack hammer . They shpould submit copies of ownership or rental agreement. 2.2.4 The Company participating in the construction and repair works is required to submit the copy of civil works (residential or public) license. |
| 3 Պարտականություններ, սահմանափակումներ, բացառություններ 3.1 Կապալառուի պարտականությունները Կապալառուն պետք է համապատասխանի և գործի ՀՀ օրենքներին և նորմատիվ ակտերին համապատասխան: Եթե Կապալառուն չի համապատասխանում գործող օրենսդրությանը Պատվիրատուն իրավունք ունի արգելել Կապալառուին մուտք գործել տարածք՝ առանց կրելու որևէ պատասխանատվություն վերջինիս կողմից կրած կորուստների համար: Կապալառուն պետք է հետևի, ներկայացնի (պահանջի դեպքում) և պահպանի բոլոր այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են նշված աշխատանքները կատարելու համար: Եթե որոշ աշխատանքներ կատարելու համար Կապալառուն ընդգրկում է ենթակապալառու, բոլոր պահանջները պարտադիր են նաև ենթակապալառուի համար: | 3. Responsibilities, limits and exceptions: 3.1 Obligations of the Contractor The contractor should comply and follow the respective Armenian legislations and regulations. In cases that the Contractor do not comply with the applicable legislation, the Contracting Authority has the right to refuse access to the site without being held responsible for the subsequent Contractor's losses. Contractor should follow, present when requested and keep records for all necessary documentation related to the scope of works described in this specifications. When contractor has subcontractors for some of the activities, all requirements are also valid for his subcontractors. Access to the site is only by following the work permit procedures of the Contracting Authority. |

| | |
|---|---|
| Կապալառուն իրավունք ունի տարածք մուտք գործել միայն ըստ Պատվիրատուի աշխատանքի թույլտվության ընթացակարգի:<br>Մրցույթի ընթացքում բոլոր մասնակիցները իրավունք ունեն Պատվիրատուի հետ միասին մտնել տարածք աշխատանքների ծավալները և կատարման վայրը ճշտելու համար:<br>Կապալառուն պետք է խնամքով վերաբերվի Պատվիրատուի սարքավորումներին և աշխատանքների կատարման ընթացքում կանխարգի դրանց վնասելը: | During the tendering, all tenderers can request joint visit to the site, together with the Contracting Authority, for clarification of the scope and the place of work.<br>Contractor should take care and prevent damages on the equipment of the Contracting Authority caused during his activities on the site. |
| 3.2.1 <u>Կապալառուն պատասխանատվություն է կրում հետևյալը ապահովելու համար՝</u><br>3.2.1.1 Իր աշխատողների փոխադրումը<br>3.2.1.2 Արտադրական սանդուղքներ մինչև 2 մ բարձրության, աշխատանքային հարդակներ (խարաչո) գործարանային արտադրության:<br>3.2.1.3 Բոլոր անհատական և հատուկ գործիքները, որոնք անհրաժեշտ են նշված աշխատանքները կատարելու համար, բացի Պատվիրատուի կողմից տրամադրվածից:<br>3.2.1.4 Անհատական պաշտպանության միջոցներ իր աշխատողների համար՝ Պատվիրատուի չափանիշներին համապատասխան:<br>3.2.1.5 Բարձրությունների վրա կատարվող աշխատանքների դեպքում ապահովել ներքևում աշխատող կամ գտնվող աշխատակիցների անվտանգությունը:<br>3.2.1.6 Անհրաժեշտ չափիչ գործիքներ<br>3.2.1.7 Բոլոր տեսակի թափոնները տեղափոխել հատուկ հատկացված վայր | 3.2.1 <u>Contractor is responsible to ensure:</u><br>3.2.1.1 Transportation of all his employees involved in the activities on the site.<br>3.2.1.2 Industrial step ladder with at least 2m.height, and scaffolring flatforms of factory manufacturing.<br>3.2.1.3 All personal and/or special tools necessary to execute the scope of this works, except the one listed as Contracting Authority's supply.<br>3.2.1.4 All personal protective equipment for his employees as per the standard of the Contracting Authority.<br>3.2.1.5 When works at heights, to ensure protection, restriction for the people passing or working in the areas below.<br>3.2.1.6 All neccessary measuring tools.<br>3.2.1.7 All waste parts to be disposed at designated areas only. |
| 3.2.2 <u>Աշխատաժամանակ</u><br>Աշխատանքներից առաջ կապալառուն պետք է ներկայացնի իր աշխատանքների մանրակրկիտ | 3.2.2 <u>Working time:</u><br>Before the start of works, Contractor should present his detailed work schedule and labor resources |

ժամանակացույցը, աշխատանքային ռեսուրսները կանգառի ժամանակահատվածում աշխատանքները ավարտելու համար: Պատվիրատուի նորմալ աշխատանքային օրը ցերեկային հերթափոխն է՝ ժ. 9:00-17:45-ը: Ոչ աշխատանքային ժամերին աշխատանքը թույլ է տրվում միայն Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:

3.2.3 Աշխատատեղի մաքրությունը

Իր աշխատանքները կատարելու ընթացքում Կապալառուն պատասխանատվություն է կրում իր աշխատատեղի լրիվ մաքրման և հավաքման համար:

Սարքավորումները և նյութերը, որոնք չեն օգտագործվում տվյալ պահին պետք է տեղադրված լինեն հատկացված տեղերում: Աշխատանքները կատարելուց հետո տարածքը պետք է մաքրվի, կարգի բերվի և միայն դրանից հետո հանձնվի պատվիրատուին:

3.2.4 Աշխատանքների հարմարությունները

Կապալառուն պետք է ապահովի իր աշխատակիցների բոլոր լրացուցիչ պահանջները, որոնք նախատեսված չեն Պատվիրատուի կողմից տրամադրվող միջոցների ցանկում:

Պատվիրատուն չի ապահովում ճաշարանով, սննդի պատրաստման կամ սնվելու այլ միջոցներով: Այդ բոլորը պետք է ապահովի Կապալառուն իր և իր ենթակապալառուի աշխատողների համար:

3.2.5 Տեղում էլեկտրական սնուցում

Աշխատավայրում առկա 220/380 Վ 50 Հց աղբյուրներից էլեկտրականության սնուցում: Կապալառուն պետք է ապահովի բոլոր անհրաժեշտ երկարացման լարերը, շարժական լուսատուները, սնման ժամանակավոր վահանակները և մյուս բոլոր սարքերը, որոնք պետք է համապատասխանեն արդյունաբերական չափանիշներին՝ տեխնիկական և տեխանվտանգության մասով:

necessary to complete the scope within the outage period. The normal working time on the site of the Contracting Authority is Day shift, from 8:00 till 17:45. Works, out of the normal working time are allowed only after preliminary agreement with the Contracting Authority.

3.2.3 Cleaning the site and house keeping:

During the execution of the works, the Contractor is responsible entirely of the cleaning and housekeeping of the area where he works.

Al the equipment and materials which are not currently used, should be arranged in special locations. After the completion of the works, area should be handed over to the Contracting Authority, clean neat and tidy

3.2.4 Site facilities:

Contractor should ensure on the site, any required by him site facility which he needs additionally to the one listed as a supply of the Contracting Authority.

Contracting Authority do not provide any cooking, canteen or other catering. Such should be ensured by the Contractor for his employees and for the employees of any of his subcontractors.

3.2.5 Power supply at the site

The available power supply is: 220/380 V 50Hz.

Contractor should provide all needed extension cables, portable lights, temporary power boards and etc. equipment, all as per the industrial standards and without damages or hazards for using. All used power boards should be grounded as a protection against short circuits. It is not allowed to use faulty breakers, self-made fuses, broken plugs and sockets and etc. damaged equipment which can cause

Բոլոր նման վահանակները/աղբյուրները պետք է հողանցվեն և պաշտպանված լինեն կարճ միացումներից: Արգելվում է օգտագործել անսարք, ինքնաշեն անջատիչներ, ապահովիչներ, ջարդված խրոցակներ, վարդակներ և այլն, ինչպես նաև ցանկացած տիպի անսարք/վնասված սարքավորումներ, որոնք կարող են հանգեցնել հոսանքահարմանը: Բոլոր ժամանակավոր մալուխները պետք է տեղադրել չոր մակերեսներին՝ բացառելով դրանց աշխատանքի ժամանակ վնասելու հնարավորությունը:

**3.2.6 Խտացված օդի մատակարարում**

Աշխատատեղում Պատվիրատուն չի ապահովում խտացված օդով:

**3.2.7 Օդափոխություն**

Այն տարածքներում որտեղ կատարվելու են աշխատանքներ պատվիրատու ապահովելու է օդափոխության համակարգով;

**3.2.8 Շինհրապարակի տրամադրում**

պատվիրատուն պարտավորվում է ազատել բոլոր սենյակները որտեղ պետք է կատարվեն շինարարական աշխատանքներ;

electrical shocks. All laid temporary cables should be installed at dry surfaces without possibility to be smashed during the works.

3.2.6 Provision of condensed air

The Contracting authority not Pprovide condensed air at the work place.

3.2.7 Ventilation

In the areas where work should be carried out, the Contracting Authority should ensure ventilation system.

3.2.8 Provision of construction area

The Contracting Authority shall empty all the rooms, where construction work shall be carried out.

3.2.9 Տեխանվտանգություն

Աշխատանքները պետք է կատարվեն տեխանվտանգության ՀՀ նորմատիվ պահանջներին և Պատվիրատուի ընթացակարգերին և չափանիշներին համապատասխան:

Աշխատանքները սկսելուց առաջ Պատվիրատուն կատարում է Կապալառուի և ենթակապալառուի աշխատողների հրահանգավորում աշխատանքի անվտանգության և պաշտպանության թեմայով: Պետք է գնահատել բոլոր առկա վտանգները և նախաձեռնել միջոցներ վնասվածքները կանխարգելու համար

3.2.9 Safety:

Site works must be performed following all Armenian safety regulations and Contracting Authority's safety procedures and standards.

Before start of the work, Contracting Authority makes safety induction for all employees of the Contractor and subcontractors. All existing hazards should be assessed and measures should be taken to prevent injuries.

In confined spaces, only low voltage to be used for portable lighting (12-36V).

| | |
|---|---|
| Փակ տարածքներում օգտագործել միայն ցածր լարման լուսատուներ (12-36Վ):<br>Աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուի բոլոր աշխատողներին պետք է տեղեկացնել տարհանման սխեմայի և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգի մասին:<br>Աշխատանքները սկսելուց առաջ ՔոնթուրԳլոբալի ներկայացուցիչը Կապալառուին տեղեկացնում է՝<br>- Աշխատատեղի յուրահատուկ վտանգների<br>- Նույն աշխատավայրում աշխատող այլ կապալառուների աշխատանքի արդյունքում առաջացող բոլոր վտանգների մասին<br>Տեղամասում ցանկացած աշխատանք սկսելուց առաջ Կապալառուի ներկայացուցիչը պարտավոր է ձեռք բերել աշխատանքի թույլտվություն (կարգագիր) Պատվիրատուի արտադրական ստորաբաժնից: | Before the start of the works, every employee of the Contractor should be informed for the evacuation schemes and procedures in case of emergencies.<br>Before the beginning of the works, CG representative will inform the Contractor for:<br>• All specific hazards on the jobsite.<br>• All existing hazards arising from the works of other contractors working at the same time in the area.<br>Before the beginning of any site activity, the representative of the Contractor should obtain work permit (NARYAD) from the operational staff of the Contracting Authority. |
| 3.2.9.1 Անհատական պաշտպանության միջոցներ (ԱՄՊ)<br>Աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուն պետք է ներկայացնի, որ իր բոլոր աշխատողները ապահովված են անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներով՝ համաձայն Պատվիրատուի տեխանվտանգության չափանիշների և ընթացակարգերի: | 3.2.9.1 Personal Protective equipment (PPE):<br>Before the start of the works, Contractor should show that all his staff is equipped with the required personal protective equipment as per the safety standards and procedures of the Contracting Authority. |
| **Արգելվում է**<br>- Օգտագործել անսարք կամ ինքնաշեն գործիքներ կամ ժամկետանց գործիքներ կամ սարքեր<br>- Օգտագործել անսարք կամ ոչ համապատասխան (չափերի) երկարացման լարեր, լուսատուներ, կամ | **Forbidden is:**<br>• usage of faulty or self-made tools or such tools for which any required periodical check is expired;<br>• Faulty or not correctly sized extension cables, lamps or voltage level different from the required for work at confined spaces. |

լարում, որոնք չեն համապատասխանում փակ տարածքներում աշխատելու պահանջներին:

3.2.9.2 Հակահրդեհային պաշտպանության ընդհանուր կանոններ՝ եռակցման, հղկման և ջերմային այլ աշխատանքների ժամանակ:

Բոլոր ջերմային աշխատանքները պետք է կատարել միայն աշխատանքի թույլտվություն/կարգագիր ստանալուց հետո:
Կապալառուն պետք է.

- Ջերմային աշխատանքների տեղամասը մաքրի դյուրավառ նյութերից և պահպանի անվտանգության գոտի՝ առնվազն 5մ պարագծով:
- Եթե դյուրավառ նյութերը հնարավոր չէ հեռացնել անվտանգության եզրագծից այն կողմ, Կապալառուն այդ նյութերը պետք է մեկուսացնի հուսալի ցանկապատով:
- Ջերմային աշխատանքների տարածքը ապահովի կրակմարիչներով և անհրաժեշտության դեպքում հակահրդեհային այլ միջոցներով:
- Կրակով աշխատանքներ կատարելու ժամանակ կանխարգի բոցերի, տաք մասնիկների հպումը դյուրավառ նյութերի հետ
- Աշխատանքներն ավարտելուց հետո անպայման անջատի բոլոր սնման աղբյուրները (հղկման, եռակցման):
- Հրդեհի բռնկման դեպքում պետք է անմիջապես դադարեցնի բոլոր աշխատանքները: Անհապաղ տեղեկացնի արտադրական ստորաբաժնի պատասխանատու անձնակազմին և համապա-տասխան աշխատողները պետք է անմիջապես

3.2.9.2 General rules for fire prevention and firefighting during hot works (grinding, welding):

All hot works can be performed only after obtaining the required work permits.

Contractor should:

· Clean the area of the hot works from flammable material and maintain safety perimeter of at least 5m.;

· When flammable materials cannot be removed from the safety perimeter, contractor should ensure reliable fences around that materials.

· Ensure the necessary fire extinguishers and if needed other firefighting equipment near the hot works.

· Not allow, during the hot works, arcs and/or hot debris to reach flammable materials.

· After the completion of the works, all power or other supply to the welding or grinding equipment should be unplugged.

· In case of fire, all works should be immediately stopped. Immediately should be notified the responsible operational staff and firefighting actions started immediately by the involved workers.

Hot works are allowed to be executed only by qualified workers.

նախաձեռնեն կրակը մարելու գործողություններ:
Զերմային աշխատանքներ կարող են իրականացնել միայն համապատասխան որակավորում ունեցող աշխատողներ:

**4. Պատվիրատուի պարտականությունները**
4.1 Տրամադրել նյութերի և աշխատանքի համար անվտանգ աշխատավայր
4.2 (Միայն) էլեկտրական սնման ապահովում՝ 380/220 վ փոփոխական հոսանքի:

**5. Տեղեկատվական փաստաթղթեր**
- ԱՊՄ օգտագործման հրահանգ
- “Տեխնիկական կանոնակարգ, Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ”՝ հաստատված ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 1933-Ն որոշմամբ
- ՔԳ տեխանվտանգության, աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության ընթացակարգեր

**4 Obligations of the Contracting Authority**

4.2 To hand-over safe area for the works and materials;

4.3 To ensure feeders (only) of 380/220VAC;

**5 Reference Documents:**

- Instruction for usage of PPE.
- State Regulations on Safe Operation of electrical equipments, systems and facilities, approved by RA Government Resolution №1933-N/2006
- Procedure of ContourGlobal for H&SE:

**CONTOURGLOBAL**

| | Document no.<br>*Փաստաթղթի N* | Sheet /<br>էջ | 1 | - | 4 |
|---|---|---|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Project<br>Նախագիծ | *Շամբ և Սպանդարյան ջրամբարների պատվարների վերնամասերի վրա եզրային արգելապատեր*<br>*Barrier walls on the upper part of the dam of Shamb and Spandaryan reservoirs* | Security Index<br>Անվտանգության ինդեքս |
| Title<br>Անվանում | *Շինվերանորոգման աշխատանքներ*<br>*Refurbishment works*<br>*Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասերի վրա եզրային արգելապատերի կառուցում*<br>*Construction of barrier walls on the upper part of the dam of Shamb and Spandaryan reservoirs* | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 00 | 12.06.17 | TR | N.Zalyan<br>Ն. Զալյան | A.Gasparyan<br>Ա. Գասպարյան | A..Yolyan<br>Ա. Յոլյան |
| REV<br>Վերանայում | Date<br>Ամսաթիվ | Scope<br>Ծավալ | Agreed<br>Համաձայնեցված է | Checked by<br>Ստուգել է | Approved by<br>Հաստատել է |

1. *Շամբ և Սպանդարյան ջրամբարների վերնամասերի վրա եզրային արգելապատերի կառուցում*

*Construction of barrier walls on the upper part of the dam of Shamb and Spandaryan reservoirs*

2. *Մատակարարման ծավալը/Scope of supply*

Սույն նախահաշվի առարկա հանդիսացող աշխատանքների ծավալն է՝
Scope of works subject of this Bill of Quantity is:

*3, Նախահաշիվ/ Bill of Quantity*

| Հ Հ | Աշխատանքների և ծախսերի անվանումը, չափի միավորը | Քանակ | Միավորի արժեքը ( ՀՀ դրամ) | | | Ընդհանուր արժեքը( ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդհանուր | Աշխատանք | Նյութեր | Աշխատանք | Նյութեր | Ընդհանուր |
| 1 | 3 | 4 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | *Շամբի ջրամբար*<br>*Reservoir of Shamb* | | | | | | | |
| 1 | Հիմքերի տակ IV կ գրունտի քանդում ձեռքով կողլիցով<br>Demolition of IV class ground under the foundations manually into a disposal area մ³ /m³ | 3.0 | | | | | | |
| 2 | B7,5 մակնիշի բետոնից հիմքերի պատրաստում<br>Making foundations with B7,5 concrete մ³ /m³ | 3.0 | | | | | | |
| 3 | Ճանապարհային անվտանգության մետաղական արգելափակոցների իրականացում<br>Implementation of road safety metal barriers գծմ/lim m | 110 | | | | | | |
| 4 | Արգելապատերի վրա զգուշացման անդրադարձիչ նշանների տեղադրում<br>Installation of warning reflector signs on the barriers հատ/piece | 30 | | | | | | |
| | **Ընդամենը**<br>**Total** | | | | | | | |